



NA-2355

469

Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ա. — ՇՐՋԱՆ ԻՐ. 1890


ՏԱՐԻ ԻԳ. ՅՈՒՆՎԱՐ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՒԱՍԱՐԱՄԻՏ ԼԻՆԵԼՆ:

Նրկայնամիտ մարդը զորիկ մարդից լաւ է, ու իւր հոգին զոպողը՝ քաղաք առնողից. (Առաիկ Սող. ԺԶ. 32):

Քո մտքիդ ու սրտիդ խաղաղութիւնը միշտ անթոյլ, անպըղտոր ու մաքուր լինի կեանքիդ օրերումն: Անբաղդութեանդ մէջ պէտք չէ սիրտդ կոտորուի, թուլանաս. իսկ բաղդաւորութեանդ մէջ յոյսը անվախ քեզ վրայ չգնեն ինքնաճաւանդութիւնովդ:



Ո՛վ դիւրախաբ սիրտ, ի՞նչ նշանակութիւն ունի քեզ համար չափազանց ուրախութիւնը, քանի որ ցնծութեան ձայները դուրս գալու և լսուելու միջոցին, արդէն թագ կացած վիշտն անակնկալ կերպով մօտենում է քեզ, կամ ի՞նչ նշանակութիւն, ի՞նչ օգուտ ունի հոգս անելը ու մտշուելը՝ արած սխալիդ, կամ քեզ պատահած ձախորդութեանդ վրայ, այ իմ միշտ անհաստատ՝ միշտ փոխուող սիրտ, քանի որ մինչև անգամ մեզ համար վիշացած՝ կամ փտած բանի մնացորդից էլ շատ անգամ էլի նոյս յոյս է վերերևում:

Սխալւում են մարդիկ, որ մեր կեանքը բաց ծովի մէջ արած ճանապարհորդութեան են նմանեցնում: Անդադար փոխւում է եղանակը. մէկ տեսնում ես՝ արև ու խաղալ է. մէկ էլ տեսնում ես, որ փոթորիկ է բարձրանում, երբեմն յաջողակ քամին փչում, տանում է մեզ առաջ՝ մեր գնալու ճանապարհն, երբեմն կատաղի, փրփրադէզ ալիքները տանում են, խփում մեզ ժայռի: – Մարդս աւելի հակամիտ է և ուզում է ծովի վերայ եղած այս փոփոխութիւններին միայն նմանեցնել իւր կեանքի մէջ եղած փոփոխութիւններն՝ և արտաքին պատահմունքներին միայն վերագրել իրան պատահածն, մինչդեռ մեր հոգւոյ ներքին տրամադրութիւնն է. որ աւելի շատ նմանում է ծովի ալիքների խաղին, որ մեզ այսօր վեր է բարձրացնում ուրախ սրտով, վաղը բռնի մեզ տանում, քցում խոր անդունդքի մէջ:

Երբոր ուշադրութեամբ քննում եմ, տեսնում եմ, որ իմ բոլոր ուրախ ու տխուր՝ որպէս և դժգոհ ժամերիս գլխաւոր աղբիւրն ու պատճառն՝ իմ զգացմունքների չափից դուրս դիւրագրգիռ լինելուցն է, որոնց անձնատուր եմ լինում՝ սկզբումը մի տեսակ հաճութեամբ, և որսնք վերջապէս իմ խոհեմութեան վրայ տիրում են, փսխանակ որ ես իմ զգացմունքների տէրը լինեի:

Այդ անհաստատ և դիւրաստահ մեր դրութիւնն, որի մէջ ընկնում ենք՝ և որ մեզ վրայ տիրում է, պէտք է ասել՝ այն-

պիսի մի բան է, կարելի է ասել, որ մեզանից չէ, այլ մեր սրտի առանձնայատկութիւնն է, որ այդպէս ենք ծնած: Չենք կարող մեր սիրտը փոխել:—Բայց միշտ կարող ենք և պարտական ենք մեզ այնպէս պահել, որ մեր զգացմունքների գերին չգառնանք, այլ մենք տէրը լինենք մեր ամենասաստիկ զգացմունքների էլ: Այս բանը պահանջում է մեզանից մեր կենցաղավարական խոհեմութիւնն, այս բանը պահանջում է մեզանից Աստուծոյ:

Թէև մարդս, մի ուրախութեան առիթ եղած միջոցին, չի կարող իրան արգելել, որ ուրախութիւնից իւր սիրտը չյուզուի. բայց կարող է զգոյշ մնալ, որ այդ ուրախութեան մէջ այնպիսի մի բան չանի, որ մեզք բերի, կամ պակասութիւն: Չի կարող ինքն իրան պահի ու չթողնի, որ իւր սիրտն երբեմն բարկութիւնից, կամ տհաճութիւնից չպղտորուի, տալն ու վրայ չլինի. բայց կարող է, կիրքը որ շարժեց թէ չէ, ինքն իրան պահի որ ոչ խօսի, ոչ էլ մի բան անի: Մեղք չեն՝ ոչ ուրախ՝ և ոչ տխրաբեր զգացմունքներն, որ մեզ վրայ իշխում են. բայց մեր հոգին անյորդով ու հանգիստ պահելու համար, այն, լուսնաբեր է, երբոր այժ քնք ունենում, որ կարողանանք պատշաճաւոր սահմանի մէջ պահել մեր յուզումն:

Արդէն հին ժամանակի մարդիկ սովորեցնում էին ու խրատում թէ՛ ձեր ուրախութեան ու վշտի միջոցին՝ ոսկեղէն միջին սահմանը պահել մի մոռանաք: Մի թողնէք, որ ձեր զգացմունքն իւր չափիցը դուրս գայ:—Ամեն առաքլինի, ամեն իմաստուն մարդիկ հասարակութեան լինելն են գովում. և մեր կրօնի աստուածային հիմնադիրը Յիսուս Քրիստոս՝ իւր երկրաւոր կեանքի ընթացքում՝ լսեմ հաւասարամտութեան օրինակը տուեց մեզ, որ իւր ուրախութեան ժամերում երբէք խաղից անց չկացաւ՝ և՛ իւր շատ տխուր եղած ժամանակն էլ՝ երբէք սաստիկ չցնցուեցաւ, չվրդովուեց: Ինչպէս որ իւր զուարճ ու զուարթ օրերումն, այնպէս էլ իւր մահուան երկիւղի սարսափելի ժամանակը խաչի վրայ՝ նոյնը մնաց, չփոխուեց, միշտ զգաստ էր, միշտ բարեբար, և հոգս էր անում ուրիշների

փրկութեան համար. ոչ ուրախութեան մէջ չափից անց կացաւ, ոչ էլ շատ տխրութեանը մէջ սիրտը կոտորուեց ու թուլացաւ:

Մեր կեանքի այլ և այլ դրութեան ու հանգամանաց մէջ՝ խոհեմութիւնն և իսկական քրիստոնէական հաւասարամտութեան առաքինութիւնը մեզ պակաս լինելն է մեր շատ տեսակ մոլորութիւնների աղբիւրն, որպէս և գլխաւոր արգելքը մեր հոգւոյ հանգստութեան, միանգամայն և գլխաւոր արգելքը մեր մաքուր և բարեպաշտ ընթացքի:

Արա համար պարտականութիւն է ամեն մի քրիստոնէի, որ ճշմարիտ իմաստութեան հետեւել է ցանկանում, որպէս և ամեն մի մահկանացու մարդու, որ ցանկանում է ուրախ, բաղդաւոր կեանք անցկացնելու մինչև իւր խորին ծերութիւնը, պարտականութիւնն է, ասում եմ, որ իւր օրտի յուզումների տէրը լինի միշտ:

Հաւասարամիտ լինելը հոգւոյ այն հանգիստ տրամադրութիւնն է, որ մարդս միշտ կարողանում է կատարել իւր ամենայն գործերն անպղտոր խոհեմութիւնով, ու չի թողնում իրան տարուելու՝ ոչ սաստիկ ուրախութեան աստիճանին՝ և ոչ սաստիկ տհաճութեան, նեղսրտութեան կամ բարկութեան:

Քրիստոնեան ամեն տեղ պէտք է միշտ միեւնոյն մարդը լինի ու ճանաչուի, ինքն իրան բոլորովին նման ու հաւասար լինի միշտ՝ ու չփոխուի: Միայն այդպէս պահելով իրան, կարող է պահել ու պահպանել իւր վսեմ տեղն, որ իւր կրօնն իրան ցոյց է տուել ու տալիս է Աստուծոյ արարածների մէջ:

Սրանով չեմ ուզում ասել, որ նա անզգայ պիտի լինի ամեն ուրախութիւնի: Մի մաքուր սիրտ՝ կարող է ամեն մի ժամանակ՝ մի ուրախ սիրտ էլ շինել. բայց ոչ մի ժամանակ չի թողնիլ իրան զուարճութիւններիցն արբելու, շշմելու: Սրանով այն էլ չեմ ուզում ասել, որ քրիստոնեան անզգայ և անտարբեր պիտի լինի՝ թէ դէպի իւր և թէ ուրիշների քաշածները: Նա մարդ է, կարող է ցաւ քաշել. բայց ցաւերիցը պէտք է չընկճուի: Նա նմանում է այն բարձր ժողովին, որոյ ստորոտումը ծովի կատաղի ալիքները մռնչում են, որոյ լանջքը սև սև ամ-

պէր են պատում, բայց որոյ գլուխն, ամպերից դուրս գալով, փայլում է արեգական ճառագայթների մէջ:

Խնդր քեզ մի տախ թէ՛ անկարելի է, որ մարդս իւր Զանքովը հասնի այդ բարձր քրիստոնէական զգաստութեան: Խնդր քո մտքումը մի տախ թէ՛ այդ բանն շատ կախում ունի քո արտաքին դիրքից՝ կամ թէ քո ունեցած բնութիւնից: — Ո՞վ է ասում, որ արտաքին հանգամանքները մեծ զօրութիւն չունին մարդուս վրայ, կամ թէ մեր զգայական բնութեան ազդեցութիւնը մեծ բան չէ. բայց երկուսիցն էլ աւելի զօրաւոր է մեր հոգին, որ Աստուծոյ հետ մէկ է:

Իրաւ է, ինքն իրան հետ շատ կռուել, շատ չարչարուել է պէտք հոգեղէն մարդուս կողմից, շատ նեղութիւնք քաշել՝ ինքն իրան յաղթելու համար, որ կարողանայ տմեն հանգամանաց մէջ՝ ամեն մի ժամանակ էլ հոգւոյ անփոփոխ տրամագրութեան մէջ մնալ ու հաւասարամիտ լինել: Բայց հոգւոյ մշտական զուարթութիւնն իմաստութեան այդ երկնային պտուղը, բուրեպաշտ սրտի այդ անգին մարգարիտն, այն, ամենադժուարին մաքառմանն էլ արժանի է:

Առաջին քայլն, որ պիտի անի մարդս այն հաստատ մտքովն, որ կարողանայ մարդս այդ պատուական մարգարիտը ձեռք բերել՝ իւր անձի վրայ մշտական ուշադրութեամբ հսկելն է. անդադար զգոյշ մնալն է, որ ոչ մի դիպուածում մեր զգացմունքի ոյժը մեզ չյաղթի. որ մենք, ինչպէս որ ասում են սովորաբար, անյրգով, սառնորիւն մնանք, ինչ ուղում է՝ լինի: — Հենց որ մի մարդ ունեցաւ այս կերպով ուշադիր լինելն իւր անձի վրայ, միւսնոյն ժամանակ էլ հաստատ կամքով աշխատեց՝ ու կարողացաւ այնքան առաջ գնալ կատարելութեան ճանապարհի մէջ, որ իւր տրամագրութիւնն երբեք չփոխի, չկորցնի, արդէն կէս յաղթութիւն արել է: Նւ իրաւ որ մարդս շատ բան կարող է անել, երբոր իւր մտքումը հաստատ կերպով դրած լինի, որ էլ առաջուան մարդը չլինի. կարող է իւր մէջը փոփոխութիւն առաջ բերել և այնպէս փոխուել, որ իրան ճանաչողներին զարմացնի. մեր հոգին որ՝ հասարակ մարդոց մէջը

մեծ մասամբ՝ մարմնոյ գերին է, իւր իշխանութիւնովը կարող է մինչև անգամ մեր ընածին հակամիտութիւններն առաքինութեան ծառայութիւնը հպատակեցնել:

Ով որ ինքն իւր վրայ իշխել գիտէ, նա ընդունակ է ուրիշները վրայ էլ իշխելու: Մի հոգի, որ անվրդով է մնում և իւր ներքին միակերպ հանգստութիւնն ոչ մի արտաքին ազդեցութիւնից չի կորցնում, շփոթուելով, կամ տարուելով, այդպիսի հոգին ամեն անգամ էլ աւելի խոհեմ, աւելի ուղիղ է դառնում ուրիշ մարդոց գործերի վրայ, որպէս և իւր գլխին եկածները մէջ եղած աստուածային նպատակի վրայ:

Իւր ուղածն անելու ու լինելու համար, ուրիշներին նեղութիւն տուող յամառ կամապաշտն՝ և շատ անգամ վատ տրամադրութեան մէջ եղող սիրտն՝ ընդհակառակն՝ ոչ իւր դատողութիւնների՝ և ոչ իւր արածի մէջն է միակերպ մնում. շուտ շուտ փոխւում է, մէկ այսպէս խօսում, մէկ էլ տեսար՝ բերանը փոխեց. այնպէս էլ է՝ իւր արած գործերում. ամեն մի բոլոր ինքն իրան հակասում է. ինքն իւր առաջ իւր պատիւը կորցնում է, ուրիշներին էլ իրաւամբ իրան այլ ևս չեն պատւում: Աշխարհքս ոչ մի ժամանակ իւր մաքուր պարզութեամբն իւր աչքին չի երևում, այլ երբեմն՝ իւր շատ գեղեցիկ պայծառութիւնովն, երբեմն էլ՝ թուխ թուխ ամպերով պատած:

Ուրեմն ինքդ քեզ զսպիր, ինքդ քեզ վրայ իշխիր: Ոչ մի քան մի անել, երբոք զգո՞ւ ես, որ աս զգացմունքներդ յո՞ւսել են. կըշռիր խօսքերդ, երբոր տեսնում ես, որ չափիցդ դուրս գալու աստիճանին ես հասած՝ ու քո վիշտդ, երկիւղդ՝ կամ բարկութիւնդ քեզ յաղթել են ուղում: — Անվրդով մարդն՝ իւր հանգիստ սրտովն ու խելօք խօսքերով՝ իւր անհաշտ թշնամու սիրտն էլ է կակղեցնում և մինչև անգամ այնքան քաղցրացնում, որ զէնքը ձեռքիցը ցած է դնել տուել իւր վարմունքի արժանաւորութիւնովն. և քանի որ ոչ մի դէպքում մի պակասութիւն չի անում՝ իւր շրապելովը կամ տարուելովը, հարկաւորութիւն չունի այդպիսի մարդը վախենալու, որ իրան կվիրաւորեն մի տեղ: Նա պոկումէ ուրախութեան վարդերն

իմաստուն զգուշաւորութիւնով. իսկ չափաւորութիւն չունեցողը թէեւ նոյնպէս պսկումէ, բայց որովհետեւ մոքից քցւում է, որ վարդի տակը փշեր էլ կան, ինքն էլ մեղաւոր, որ այդ վարդի փշերն իւր ձեռքը ծակում են և արիւնոտում, դառնացնելով իւր բոպէական զուարճութեան ակորժութիւնն ու քաղցրութիւնը: — Զգոյշ կայ, տաքացած ժամանակդ, մոքումդ հաստատ դնելու, որ այս՝ այն բանն անպատճառ անես, կամ մի՛ թոյլ տալ քեզ մի բան վրճուելու, երբ որ յարկութիւնից՝ կամ բարկութիւնից յուզուած ես: Լա՛ւ իմացիր, որ՝ այդ յուզմունքդ անց կենալուց յետոյ՝ փոշիմանութիւնը կգայ, քեզ կգանի, ու քո սիրտդ կչարհարի: Մի՛թէ քո կեանքիդ շատ ու շատ փորձառութիւնները զուր անշը քեզ խրատ եղան, որ զգոյշ լինիս:

Երբոր սրտիդ մէջ մի յուզմունք ես նկատում, երբոր զգում ես, որ դժկամակութիւնիցդ սիրտդ եփ է գալի, բարկութիւնիցդ կրակ ես կարել, կամ թէ տհաճութիւնդ ու տխրութիւնդ սեւ ամպի պէս սիրտդ պատել է կամ թէ մի զուարճութեան մէջ՝ չափից անց կենալուցդ՝ էլ քեզ յայթել չես կարողանում, այն ժամանակ քո գլուխն ազատիր. հեռու փախիր բազմութեան ձեն ու ձուկից, քաշու՛ր մի այնպիսի տեղ, որ մէնակ լինես: Ուրիշ բաներ, որ աչքիդ առաջը կգան, ուրիշ մոքերի կերթաս, ուրիշ մտածմունք ու զգացմունք կզարթեցնեն քո մէջդ. այսպիսով կվերականգնի քո մէջդ գեղեցիկ հաւասարակշռութիւն, և միշտ իշխող մնալով ինքդ քո վերայ, անկախ կմնաս աշխարհիս արտաքին բաներից՝ ու կպահպանես քո սրտիդ անդորրութիւնն՝ և ինքդ քեզանից դո՛հ կլինես առաջուայ նման: Այսպէս անելովդ քանի՛ քանի տեղ ամօթ քաշելուց, քանի՛ քանի տեղ արածիդ վրայ փոշիմանելուցդ ազատ կմնաս:

Բայց այս հաւասարամտութիւնն, որ շատ ջանք ես անում ունենալու՝ իբրեւ ճշմարիտ քրիստոնեայ, պէտք է միայն դոսից երեւցած մի բան չլինի, պէտք է ցոյց չտաս միայն այն ուժիդ մէջն, որ ի՛նքդ քեզ վրայ բանեցնում ես ու քեզ բռնադա-

տում շարժմունքներիդ քո ուղեցած ձեռն տալ, կամ կերպարանքդ այսպէս այնպէս շինել, վսեմ ու պատկառելի երևալու համար ուրիշների աչքում, կամ թէ դիւր գալ, հաւանելի լինել, այլ այդ քո ոյժդ սրտիդ մէջը պիտի իշխի: Քրիստոնէական հաւատարամութիւնն այն վարպետութեան մէջ չէ, որ մարդս ուրիշների առաջը դիմակաւորուի նորա մէջը չէ, որ կարողանանք ծպտել այն ժամանակն էլ, երբ որ սրտներումս բարկութեան կրակ է վառվում. չէ, քրիստոնէութիւնը՝ կեանքի մի լոկ՝ արհեստական ճարտարմութիւնից աւելի բան է. քրիստոնէութիւնը՝ մի խորին, մի երջանկացնող ճշմարտութիւն է. աչքի ուրախ նայուածքը խորամանկութեան գործ պիտի չլինի, այլ զուարթ սրտի հայելին:

Եւ վերջապէս ի՞նչ շահ ունիս, կամ ի՞նչդ է աւելանալու այդ դիմակաւորութեանցդ: Կարելի է դու ուրիշներին խաբել ես ուղում, կամ խաբում ես. բայց քեզ աւելի ես խաբում, քան թէ նրանց: Դու քեզ խաբում ես, չմտածելովդ, որ քո մարդկային արժանաւորութեանդ, քո հոգւոյդ մաքրութեանը մի վնասակար բան ես անում: Դու քեզ խաբում ես մինչեւ անգամ այն ժամանակն էլ, երբոր յոյս ես ունենում ուրիշներին խաբելու. բայց չես էլ մտածում, որ քո վարպետութիւնդ ուրիշների համար գոռար չէ հասկանալու. որ օրը կըգայ, բանը կըացուի, յայտնի կլինի, որչափ էլ ուշ լինի. եւ հենց որ կտեսնեն, որ քո գործերդ բոլորովին հակասում են քո արտաքին երևոյթին, որ քեզ երեսանց միայն անխաբախ մարդ ես ցոյց տուել՝ դու աւելի ես անպիտան մարդ, կճանաչուես ու կատեն քեզ, որչափ որ աւելի պատճառ կունենան քո կակուղ խօսքերիդ, բարեկամական երես ցոյց տալուդ չհաւատալու: Առաջին քո արած անարդար գործդ, որ կրտեսնեն, քեզ կընեն երեսանց արդար երեւցող մեղաւորների, կեղծաւոր խաբեբանների շարքում:

Ճշմարիտ եղիր, ինչպէս կեանքիդ մէջ ուրիշների հետ՝ նոյնպէս էլ հենց քո առաջդ. երբէք երկու երեսանի մարդ մի երևիր: Ոչ միայն քո շարժմունքներիդ տէրն եղիր, այլ աւելին

ասեմ, քո սրտիտ տէրն եղիր: Երբոր մարդոյ արած գործերը քո սիրտդ վրդովւում են՝ ու տեսնում ես, որ համբերութիւնիցդ դուրս ես գալի, հաւասարամտութիւնդ կորցնում ես՝ զօրացիր, մտածելով, Աստուծոյ երկայնամտութեան, քաղցրութեան ու ողորմածութեան վերայ, որ դու էլ քո Ստեղծողիդ նման լինիս: Յիսուս պատուիրեց՝ «բարի տրէ՞ք նրանց, որոնք որ նեղացնում են ձեզ ու չարչարում»: Մի մառանար, որ մարդիկ այնքան չար չեն, որչափ որ սխալական արարածներն են: Նրանք սխալւում են, բանը լաւ չհասկանալուց, սխալւում են քեզ վրայ, իրանց տուած դատողութեան մէջ քեզ չճանաչելուց, սխալւում են այն բանի մէջ, ինչ որ լաւ և օգտակար են համարում: Նրանք սխալւում են իրանց ընտրած միջոցների մէջ, որով ուզում են բան գլուխ բերել, ու չի յաջողում իրանց: Ինչո՞ւ ես ուզում նեղանալ նրանց խելքի գործած մեղքերի վրայ: Եթէ որ ուրիշ՝ և աւելի լաւ հասկացողութիւն, ուրիշ՝ և աւելի լաւ դաստիարակութիւն ունեցած լինէին իրանց փոքրութիւնից, բոլորովին ուրիշ կերպ կգատէին ու կգործէին: Նրանք սխալւում են՝ թող սրտի տէր լինելուց, նրանք սխալւում են, ինչու որ այնքան զօրաւոր խելքի ու մտքի տէր չեն, որ՝ իրանց խելքի ուժովն՝ իշխեն իրանց ղգայական հակումների վրայ: Քո նրանց չհաւանելդ, բարկանալդ, նրանց խօսած, կամ արած բանը սրտիդ ծանր գալը, տխրելդ՝ ոչ իրանց կփոխի ոչ էլ իրանց արած գործերի հետեանքն — Արիացիր, զօրացիր: Հեռու կաց, եթէ կարող ես, նրանց հետ բան ունենալուց, կամ ընկերութիւն անելուց, իսկ եթէ չես կարող՝ ու ստիպուած ես, որ նրանց հետը լինես, նրանց հետ գործ ունենաս, կամ ապրես, լաւ պարզ հասկացիր, որ քո ունեցած հանգամանքիդ բերմունքն է այդ, քո վիճակդ է՝ և իսկապէս մի փորձանք է քեզ համար, որի հետ պէտք է կռուես քաջութիւնով՝ ու յաղթես: Երբ որ տեսնում ես, որ սիրտդ տեղը չէ, մի տխրութիւն է գալի վրադ, ինքդ էլ չես իմանում, ինչ անես, որ հոգուդ այդ վատ տրամագրութիւնից ազատուես, երբոր տեսնում ես, որ մօտիկ ժամանակներում գալու չարիքը՝ քեզ հոգսեր են պատ-

ճառում ու միտքդ տանջում — ինչքան որ զօրութիւն կայ մէջդ, բանեցուր՝ ու բռնի վեր բարձրացուր քեզ քո ընկճուած դրութիւնիցդ։ Միտքդ բեր, որ ամենից քաջ մարդն ամենից տռաջ է յաղթութիւն անում։ Իսկ վախկոտն՝ արդէն կիսով չափ յաղթուած է։ Եւ ինչո՞ւ համար այնպէս հեշտութիւնով սիրտդ պէտք է կշտրես։ Մի՞թէ ինչ որ մինչեւ ցայժմ՝ կեանքիդ մէջը փորձեցիր, տեսար, բաւական չեղաւ քեզ համար, որ հասկանաս թէ՛ ամեն մի չարիք, որից վախենում ենք, հեռուիցն է աւելի սարսափելի երևում, քան թէ իսկապէս է, երբոր մօտենում է։ Մի՞թէ չգիտես, որ Աստուծոյ սուրբ նախախնամութեան կարգաւորութիւնովն ամեն մի մրրիկ, որ բարձրանում է, էլի պէտք է հանդարտի. ամեն մի վտանգ, որ պատահում է մեզ, պէտք է անց կենայ։ Եւ եթէ որ շատ ծանր ու դժուար տանելու, գիմանալու բաներից էլ քո գլխիդ գալու լինէր, օրինակ՝ յանկարծ տուճդ կրակ ընկնէր, այրուեր. հալածուէիր, ու աքսորուէիր, կամ ստիպուած լինէիր հայրենիքդ, ընտանիքդ թողնել ու դուրս գնալ. անբաղդութիւն ու նենայիր յետին աղքատութեան մէջ ընկնելու և քաշելու, այնպէս որ՝ քո հասակդ առած օրերիդ համար ոչ մի հանգիստ ապաստանարան էլ չանար գլուխդ ծածկելու այն ժամանակն էլ, ո՛վ քրիստոնեայ, քո երկիւղդ իւր մեծութիւնովը քեզ պիտի չյաղթի, յուսահատութեան՝ ու քո ստեղծողիդ անհաւատարիմ լինելու չտանի։ Հաստատ մնա՛ քո ունեցած հաւատի մէջ, որ աստղերից վերեւումն Աստուած կայ, որ մի բարի հօր պէս քեզ համար հոգացողութիւն կանի, որ քեզ իւր ձեռքիցը չի թողնի։ Այն ժամանակ էլ, երբոր հրդեհի սաստիկ երկիւղի մէջ կլինիս ու կտեսնես, որ մինչեւ ցայժմ՝ ունեցած բազդաւորութիւնդ կորցրիր, ունեցած չունեցածդ փչացաւ, այլ ևս ազատելու բան չմնաց, ամեն բան ձեռքիցդ դնաց—, կմնայ քեզ, որ ազատես գոնէ քո հաւասարամտութիւնդ, որպէս զի գոնէ մտքիդ խաղաղութիւնը կորցրած չլինիս։

Այդ բանը կարող ես անել, երբոր պինդ քարի նման անդրդուելի ու հաստատ հաւատովդ աղօթք անես, ինչպէս որ

քո Փրկիչդ Գէթսեմանէումն աղօթք արաւ թէ՛ «Հայր, ոչ թէ իմ, այլ քո կամքդ լինի»: Երանի քեզ, հիթէ որ քո հաւատդ, սէրդ ու յոյսդ սրտիցդ չես հանել: Ամեն մի մարդու, որ համբերել է մինչեւ վերջն, իւր ունեցած հաստատ հաւատը չկորցնելով իւր Ստեղծողի վրայ, մեր երկնաւոր Տէրը պոսակել է յալթութեան այն սուրբ պսակովն, որ Յիսուս իւր ճշմարիտ աշակերտներին խոստացել է: Մարդուս սրտից թո՛ղ արիւն գնայ, աչքիցն հեղեղի պէս արտասուէ թափի — ո՛վ ինչ կարող է ասել, ո՛վ կարող է մեղադրել Նրան — ինչու որ կորցրած բաղդաւորութեան վրայ մեր տրամելը մարդութիւնից դուրս բան չէ. — բայց քաջասիրտ մարդն իւր մահուան անկողինքի մէջ էլ չի ընկճուիլ, ինքն իրան չի կորցնիլ: Նրա սիրտը չի կոտորուիլ, չի թուլանալ, երբ որ, իւր քաջած ցաւերից տանջուելու միջոցին, մահուան սատուիկ վախն էլ վրան գայ: Նա գիտէ, որ իւր Փրկիչը կենդանի է. գիտէ, որ Աստուած սիրողների համար ամեն բան բարի է, և թէ՛ սարսափ բերող ցաւերի գիշերն անց կենալուց յետոյ, մի յաւիտենական ու երջանիկ առաւօտ պիտի լուսանայ,

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

Ինչպիսիք են Արեւելու ճիւղերը:

Ինտիկան է քաղաքակրթութեան մէջ յետ մնացած ազգերին հետեւող վիճակի մէջ գտնուիլը: Այս գիրքը բռնում են ամեն այն ազգերն, որոնք սթափելով տգիտութեան խորը քնից սկսում են կեանքի ամեն ճիւղերին վերաբերեալ ձեւերն ընդօրինակել աւելի քաղաքակրթուած և լուսաւորեալ ազգերից: Այս է վիճակն անխտիր թէ մեծ և թէ փոքր, թէ քաղաքակաշապէս անկախ և թէ մանաւանդ հպատակ ազգերի, որոնք մարդկութեան քաղաքակիրթ և լուսաւորեալ մասից յետ են մնացած մտաւոր զարգացման կողմանէ: Ձգտումն ազնիւ է. քանի որ նա վերաբերում է ձգտողների թէ տնտեսական, թէ մտաւոր և թէ բարոյական կատարելագործութեան, և այդ